# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Արմեն Հարությունյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն,<br>2017 թվականի մայիսի 17-19 |
| 4. | Հրավիրող կողմը | Եվրասիական տնտեսական հանձնաժողով |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ագրոարդյունաբերական համալիրի հարցերով խորհրդատվական կոմիտեի 14-րդ նիստին |
| 6. | Քննարկված թեմաները | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ագրոարդյունաբերական համալիրի հարցերով խորհրդատվական կոմիտեի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.<br>1. անդամ պետություններում գյուղատնտեսության պետական աջակցությանը տարեկան հաշվետվությունների ներկայացման ձևաչափը,<br>2. ԵԱՏՄ-ում ակվակուլտուրայի զարգացման ծրագիրը և զարգացման խոչընդոտների ուղղությամբ ձեռնարկվող քայլերը,<br>3. 2018-2021 թվականների համար ԵՏՄ-ի անդամ պետությունների համակարգված ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացումը,<br>4. 2017 թվականին նախատեսված գիտահետազոտական աշխատանքները: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | ՌԴ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Եվգենի Գրոմիկոյի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՌԴ գյուղատնտեսության նախարարության միջև ստեղծված աշխատանքային խմբի առջև դրված հիմնական խնդիրները և համագործակցության հիմնական ուղղությունները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում հայ-ռուսական համագործակցության ներկա վիճակը և զարգացման հեռանկարները:<br><br>ՌԴ ֆինանսների նախարարության միջազգային |

| | | |
|---|---|---|
| | | ֆինանսական հարաբերությունների վարչության պետ Անդրեյ Բոկարևի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է ՌԴ կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օժանդակությամբ իրականացվող ծրագրերի ընթացքը: |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը | Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցել հետևյալ ուղղություններով՝<br>1. օրգանական գյուղատնտեսության կանոնակարգում և զարգացում,<br>2. գյուղատնտեսության քարտեզագրում և տեղեկատվության թվայնացում,<br>3. ներմուծման փոխարինում,<br>4. ձկնորսության կանոնակարգում: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | • Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ագրոարդյունաբերական համալիրի հարցերով խորհրդատվական կոմիտեի նիստի ընթացքում հայկական կողմը առաջարկել է քննարկել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման տրամադրման հարցը, որով Հայաստանում կարդիականացվի բանջարաբոստանային մշակաբույսերի սերմերի արտադրությունը, ինչը հնարավորություն կընձեռի փոխարինել երրորդ երկրներից ներմուծվող տրանսգենդերային սերմերը:<br>• ՌԴ գյուղատնտեսության նախարարությանը առաջարկվել է կազմակերպել հայ մասնագետների այցելություն ՌԴ գյուղատնտեսության նախարարության վերլուծական կենտրոն՝ փորձի փախանակման նպատակով: Առաջարկվել է նաև Հայաստան հրավիրել ՌԴ ձկնորսության պետական գործակալության մասնագետներին: |
| 10. | Գործուղվողները | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 25.05.2017թ. |